Հավելված
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2022 թվականի հունիսի 4 -ի N 60-Ա/3 հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

Փորձագետի ներգրավման դեպքը և հիմնավորումները

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) համակարգմամբ 2008 թվականից մեկնարկել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում հավաքագրվել են Կառավարության կողմից 1999 թվականի հունիսի 10-ի N432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1337-Ն որոշումներով սահմանված կարգով և ժամկետում հաշվառված շուրջ 7000 ընտանիքների փաստաթղթային փաթեթներ:

Ծրագրի ավարտով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել նշված 7000 ընտանիքի փաստաթղթային փաթեթները նախապատրաստել արխիվացման համար և դրանք զուգահեռաբար թվայնացնել/սկանավորել: Նշված արխիվացման և թվայնացման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել նաև ծրագրի իրականացման հետ կապված այլ փաստաթղթերի /գրություններ, հարցումներ, ցուցակներ և այլ փաստաթղթեր/ մասով:

Հաշվի առնելով կատարման ենթակա աշխատանքների ծավալների ավելացումը և Կոմիտեի բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների վարչության չհամալրված աշխատատեղի առկայությունը, անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետի:

Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամանակահատվածով:

Փորձագետին ներկայացվող պահանջները

1. բարձրագույն կրթություն
2. մեկ տարվա աշխատանքային ստաժ
3. իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի, ընթացակարգերի իմացություն
4. տեղեկատվության վերլուծության և հաշվետվությունների մշակման ունակություն.
5. պետական աջակցության բնակարանային որևէ ծրագրի շրջանակներում աշխատելու փորձառություն
6. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Ծրագրի ակնկալվող արդյունքը

Փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները՝

1. փաստաթղթային փաթեթների տարանջատում ըստ մարզերի, համայնքների, կարգավիճակի
2. փաստաթղթային փաթեթներում տեղ գտած փաստաթղթերի դասավորում այն տրամաբանությամբ, որ փաթեթի սկզբում տեղ գտնեն Կառավարության կողմից 1999 թվականի հունիսի 10-ի N432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1337-Ն որոշումներով սահմանված հիմնական փաստաթղթերն, այնուհետև՝ փաթեթների համալրման նպատակով հավաքագրված լրացուցիչ փաստաթղթերը,
3. ծրագրի իրականացմանը և կազմակերպմանն առնչվող գրությունների, հարցումների, ցուցակների և այլ փաստաթղթերի խմբավորում՝ ըստ մարզերի,
4. փաստաթղթային փաթեթների և ծրագրի իրականացմանն առնչվող այլ փաստաթղթերի նախապատրաստում արխիվացման համար, յուրաքանչյուր փաթեթի համար տեղեկատու-որոնողական հնարավորություն ստեղծելու նպատակով փաթեթի կազմում առկա փաստաթղթերի ցանկի նախապատրաստում,
5. Արխիվացման համար նախապատրաստված փաստաթղթերի թվայնացում /սկանավորում/:

Աշխատանքի գնահատման չափանիշները

Աշխատանքի արդյունքները ներկայացվում են արխիվացման համար պատրաստ փաթեթների և դրանց թվայնացված տարբերակների ձևով և ստորև ներկայացված բաղկացուցիչները հանդիսանում են գնահատման առարկա և չափանիշ՝

1. յուրաքանչյուր ընտանիքի փաթեթ դասավորված, կազմված, ցանկավորված և կարված է առանձին թղթապանակ/արագակարի մեջ, որի դիմերեսին լրացված են փաթեթի վերաբերյալ հիմնական հակիրճ տեղեկությունները,
2. ծրագրի իրականացմանն առնչվող փաստաթղթերն՝ ըստ մարզերի, դասավորված, կազմված, ցանկավորված և կարված են առանձին թղթապանակի մեջ, որի դիմերեսին լրացված են փաթեթի վերաբերյալ հիմնական հակիրճ տեղեկությունները,
3. վերը նշված երկու կետերում նշված փաստաթղթերի սկանավորված և պահպանված է PDF ֆորմատով և կրնօրինակը պահված է էլեկտրոնային կրիչի վրա:

Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները

Փորձագետն ամփոփ հաշվետվությունը ներկայացնում է

- ծրագրի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որը գնահատվում է ավարտական փուլով.
- կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

Տեղեկատվություն

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների վարչությունում փորձագետ ներգրավելու համար դիմած և պայմանագիր կնքած անձի մասին

N	**Պաշտոնի անվանում**	**Դիմողի անուն, հայրանուն, ազգանուն**	**Պայմանագիր կնքած անձի անուն, հայրանուն, ազգանուն**
1	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների վարչության փորձագետ	Հասմիկ Զավենի Արզումանյան	Հասմիկ Զավենի Արզումանյան